

Տ. ՎԱԶԳԵՆ ԱԲԵՂԱ ՆԱՆՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(7 հոկտեմբերի 2001 թ.)

«Ցանունս հօր եւ Որդոյ եւ հոգւոյն Սրբոյ. ամեն»:

Սիրելի հավաքացալներ,

Այսօր այս բեմից ընթերցվեց Մարկոսի Ավետարանի այն հատվածը, ուր պատմվում է, թե ինչպես հրեա օրենսգետները, քահանաներն ու ծերերը մտրեմուն են Զրիսափոսին արդեն որերորդ անգամ՝ հիմնական մեկ նպատակ հետապնդելով. «գտնել մի միջոց՝ նրան մատնելու»:

Քանզի Զրիսափոսի մասին համբավն արդեն փարածվել էր ամբողջ հրեաստանով մեկ, և հոգևոր իշխանավորներն օրավուր դժվարանում էին փալ պատրաստան այն բազմաթիվ հարցերի, որոնց իմաստը նույնն էր. «Ո՞ր է հիսուս» և «Ո՞ր է Նազովրեցի հյուսնի որդին»:

Այս անգամ ես, հիսուսին ծուղակը գցելու նպատակով, նրան մտրեմուն են հարց փալու, թե՛ «ի՞նչ իշխանությամբ ես դու այդ անում և ո՞վ քեզ այդ իշխանությունը» (Մրկ. ԺԱ 28):

Հիսուս գիտեր նրանց մտքի խորհուրդը, ուստի հարցին հարցով է պատրաստանում՝ ասելով. «Դուք էլ այդ դեպքում պատրաստանեք ինձ. հովհաննես Մկրտչի մկրտությունը երկնքից էր, թե մարդկանցից»։ Փարիսեցիների և ծերերի շարքերում անմիջապես իրարանցում է ընկնում, որովհետև նման պատրաստան հարցադրման նրանք բնավ չէին սպասում. և այս դեպքում փոխանակ հիսուսին փորձելու, իրենք էին ընկել ծուղակը։ Եթե իրենք հրապարակավ վկայեին, որ հովհաննես Մկրտչի մկրտությունը երկնքից է, ապա պարզապես չէին կարողանա պատրաստան փալ հետևյալ հարցին. «Իսկ ինչո՞ւ այդ դեպքում չընդունեցիք այն»։ Իսկ եթե ասեին, որ մկրտությունը մարդկանցից է, ապա իրենց դեմ կթշնամացնեին այնպեղ հավաքված ժողովրդին, քանի որ վերջինս սիրում էր հովհաննես Մկրտչին և ընդունում իբրև մարգարեի։

Ալկնհայր է, որ հիսուսի և ոչ մի պատրաստան չէր կարող բավարարել նրանց, քանի որ փարիսեցիները պատրաստանից ավելի սխալ միտք էին ուզում որսալ Տիրոջ շուրթերից, որպեսզի հետագայում այն օգտագործեին իր իսկ դեմ՝ լինի դա ապյաններում, թե ժողովարաններում:

Անձնապես չեմ կարողանում հավաքալ, որ օրենսգետները չգիտեին, թե ինչ իշխանությամբ է գործում հիսուս. չէ որ իրենց կյանքի օրերին իրենք իսկ փեսել էին այնպիսի հրաշքներ, որպիսիք չէին փեսել նույնիսկ իրենց նախահայրերը:

Այո՛, կաղերը քայլում էին, կույրերը՝ փեսնում, բորոտները մաքրվում էին, և բնությունը՝ հնազանդվում, դեերը դուրս էին գալիս մարդկանց միջից, և վերջապես՝ մահն էր փնդի փալիս՝ մեռյալների հարության հրաշքով...

Արդյո՞ք մոռացել էին իրենք խուլ ու համրի բժշկության հրաշքը, երբ հերթական անգամ մեղադրելով Հիսուսին, թե՛ Նա դևերին այլ կերպ չի հանում, եթե ոչ՝ Բեհզեբուլի՝ դևերի իշխանի միջոցով (Մաթթ. ԺԲ 24), ի պատասխան որի Տերը պարզաբանում է, որ ոչ մի թագավորություն չի կարող կանգուն մնալ, եթե այն ներսից բաժանված է: Իսկ եթե ինքը գործում է չարին հակառակ, ապա ինքը ինչպե՞ս կարող է լինել Բեհզեբուլի գորակիցն ու իշխանակիցը: Հիսուս ասում է. «Իսկ եթե Աստուծո՞ւ հրաշքով եմ հանում դևերին, ուրեմն Աստուծո՞ւ արքայությունը հասել է ձեզ վրա» (Մաթթ. ԺԲ 28):

Արդյո՞ք չէին լսել ծերերը ժողովրդի խոսքը, որ զարմանում և փառաբանում էր Աստուծո՞ւ Հիսուսին այսպիսի իշխանություն ավոդին (Մաթթ. Թ-8):

Այս համայնապարկերում որքան զավեշտալի է այն իրողությունը, որ խոզերի մեջ առաքված դևերը կարողացան ճանաչել Քրիստոսին, իսկ Աստուծո՞ւ ծառաները, նրա խոսքի գիրքակներն ու քահանայական սերնդի ժառանգները չկարողացան տեսնել, թե՛ն տեսան, չկարողացան հասկանալ, թե՛ն ումանք հասկացան, չկարողացան հավաքալ, թե՛ն ումանք հավաքացին և ցավալիորեն չկարողացան ընդունել, որ Հիսուս Քրիստոսն է Աստուծո՞ւ Միածին Որդին, աշխարհի Լույսն ու Կյանքը:

Դարեր են անցել, բայց ավերարանական այս դրվագը խոսում է նաև այսօր, երբ առավել քան երբևէ գորավոր է անհավատության ախար:

Այսօր մարդիկ, կենդանի հրաշք տեսնելով անգամ, ավելի շատ զմայլվում են, քան թե փառք տալիս Աստուծո՞ւ և հավատում:

Աստուծո՞ւ այսօր էլ հազար-հազարավոր հրաշքներ է գործում, բայց մենք անհամարաբար հակված ենք դրանց բաղադրարարմանը իմանալու, ստուգապես ճշտելու, թե ի՞նչ իշխանությամբ և կամ ինչո՞ւ կամ ինչպե՞ս եղան դրանք:

Բայց չէ՞ որ այս երկրորդական հարցերի մեջ խորհրդագրվում և մոռացվում է ինքնին հրաշքը, որն Աստուծո՞ւ առարկայական, տեսանելի ներկայությունն է մեր կյանքում, և որի նպատակն է սկզբանե Տիրոջ մասին վկայելն է:

Այսօր մարդկանց համար ավելի ու ավելի է դժվարանում հավատալը, պարզապես, ուղղակիորեն հավատալը, անկեղծորեն հավատալը, մանկան նման հավատալը:

Բայց, արդարև, Աստուծո՞ւ իր խոսքովանը հավատարիմ մեզ հետ է մինչև աշխարհի վախճանը:

Եվ, արդ, այս պահին իմ միակ աղոթքն է, որ Տերը շնորհ տա մեզ հավատալու, որ բացի մեր աչքերը Իր հրաշքերը տեսնելու, որ մենք Իր հետ մեկ լինենք, և որ Բարին Հիսուս թագավորի մեր սրտերում այսօր, վաղը և հավիտյանս հավիտենից: Ամեն: